Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության դատարան

Դիմումատուներ՝ թիվ 91254910 քրեական գործով տուժող Ռոբերտ Հովհաննիսյանի իրավահաջորդ Միքայել Հովհաննիսյան

Հասցե՝ ք. Վանաձոր, Տարոն 2, ՔՇՀ 3 68/8

թիվ 91254910 քրեական գործով տուժող Անդրանիկ Սարգսյանի իրավահաջորդ Սվետլանա Կարապետյան

Հասցե՝ ք. Երևան Լենինգրադյան 48/3 բն. 17

թիվ 91254910 քրեական գործով տուժողներ Ռոբերտ Հովհաննիսյանի և Անդրանիկ Սարգսյանի իրավահաջորդների ներկայացուցիչ Արթուր Սաքունց

Հասցե՝ ք. Վանաձոր Տիգրան Մեծի 59

Պատասխանող՝ ՀՀ ՊՆ ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Մ. Բուլղադարյան

ք. Երևան, Բաբայան 6

ԴԻՄՈՒՄ-ԲՈՂՈՔ

(ՀՀ ՊՆ ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Մ. Բուլղադարյանի 2012 թ. հուլիսի 28-ի քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը վերացնելու պահանջի մասին)

1. Դեպքի նկարագրություն.

2010 թ. հուլիսի 28-ին, ժամը 18-ի սահմաններում ՊԲ թիվ 36534 զորամասի կողմից սպասարկվող թիվ 147 մարտական դիրքում հրազենային մարտական վնասվածքով հայտնաբերվել

են նույն զորամասի, 4-րդ գումարտակի 11-րդ վաշտի 2-րդ դասակի հրամանատար ավագ լեյտենանտ Վարդգես Արարատի Թադևոսյանի և նույն գումարտակի 11-րդ վաշտի 2-րդ դասակի, պարտադիր ժամկետային զինծառայողներ՝ սերժանտ Գարեգին Սամվելի Հովսեփյանի, շարքայիններ Անդրանիկ Սարգսի Սարգսյանի, Ռոբերտ Միքայելի Հովհաննիսյանի, Կարո Շուրիկի Այվազյանի և նույն զորամասի հետախուզական վաշտի 1-ին դասակի 1-ին ջոկի հետախույզ-նռնակաձիգ, շարքային՝ Արտեմ Սուրենի Մանասյանի դիակները:

2.Գործի դատավարական նախապատմություն.

2.1. ՀՀ ՊՆ քննչական ծառայության 2-րդ կայազորային քննչական բաժնում 28.07.2010թ. ՀՀ քրեական օրենսգրքի 104-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի հատկանիշներով հարուցվել է թիվ 91254910 քրեական գործը: Հարուցված քրեական գործի վերաբերյալ շուրջ 2 տարի կատարվել է նախաքննություն:

2.2. 2012 թ. հուլիսի 28-ին ՀՀ ՊՆ ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Մ. Բուլղադարյանի կողմից կայացվել է

- թիվ 91254910 քրեական գործով Վ. Ա. Թադևոսյանի, Գ. Հովսեփյանի, Ա. Սարգսյանի, Ռ. Հովհաննիսյանի և Ա. Մանուկյանի սպանության կապակցությամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ հանցանք կատարած անձի՝ Կարո Շուրիկի Այվազյանի մահացած լինելու պատճառաբանությամբ
- Վ.Ա. Թադևոսյանի կողմից պաշտոնեական լիազորությունների սահմանը անցնելու կապակցությամբ, որը անզգուշությամբ ծանր հետևանք է առաջացրել, քրեական հետապնդում չիրականացնել հանցանք կատարած անձի՝ Վարդգես Արարատի Թադևոսյանի մահացած լինելու պատճառաբանությամբ
- Թիվ 91254910 քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշում

2.3. 2012 թ. հոկտեմբերի 2-ին ստացվել է 2012թ. սեպտեմբերի 20-ին ՀՀ պաշպանության նախարարության քննչական ծառայության քննչական բաժանմունքի քննիչ Մ. Բուլղադարյանի թիվ 1169 գրությունը, որով հայտնվել է, որ «ՀՀ քր. դատ. օր-ի 263 հոդվածի համաձայն ուղարկում եմ որոշման օրինակը և հայտնում եմ, որ ստանալու պահից 7 օրյա ընթացքում այն կարող է բողոքարկվել վերադաս դատախազին: Առդիր ,,90,, թերթ»:

2.4. Վերը նշված գրությանը կից քննիչ Մ. Բաղդասարյանի կողմից կայացված քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը չլինելու պատճառով դիմում եմ ներկայացրել ՀՀ ՊՆ ՀԿԳ քննչական բաժնի ավագ քննիչ Մ. Բուլղադարյանին՝ խնդրելով տրամադրել թիվ 1169 գրությանը չկցված որոշումը:

2.5. 2012 թ. հոկտեմբերի 16-ին առձեռն ստացել եմ թիվ ՀՀ ՊՆ ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Մ. Բուլղադարյանի կողմից կայացված քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը:

2.6. 2012 թ. հոկտեմբերի 19-ին վերը նշված որոշման դեմ դիմում-բողոք է ներկայացվել ՀՀ զինվորական դատախազ Գ. Կոստանյանին:

2.7. 2012 թ. նոյեմբերի 1-ին ՀՀ Զինվորական դատախազ Գ. Կոստանյանի կողմից ստացել եմ բողոքը մերժելու մասին որոշում:

3. ՀՀ ՊՆ ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Մ. Բուլղադարյանի կողմից կայացված քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման վերացման հիմքերը և պատճառաբանությունները.

3.1. Նախաքննության մարմնի ոչ պատշաճ քննության մասին պնդումներ.

Նախաքննության ավարտի մասին տեղեկացել եմ սույն բողոքի 2.3-րդ կետում նշված գրությամբ, նախաքննության մարմինը ոչ միայն չի տրամադրել քրեական գործի հարուցումը մերժելու մասին որոշումը, այլև հնարավորություն չի ընձեռել կողմին նախաքննության ավարտից հետո ծանոթանալ քրեական գործի նյութերին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետի համաձայն՝ տուժողի, քաղաքացիական հայցվորի, կասկածյալի, մեղադրյալի օրինական ներկայացուցիչը, սույն օրենսգրքով, սահմանված կարգով, իրավունք ունի նախաքննության ավարտման պահից ծանոթանալ գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանել և գործից դուրս գրել ցանկացած ծավալի ցանկացած տեղեկություն:

Վերը նշված իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ քրեական գործով նախաքննության ավարտից հետո վարույթն իրականացնող մարմինը պարտավոր է կողմերին ծանոթացնել քրեական գործի նյութերին: Մինչդեռ վարույթն իրականացնող մարմնի կողմից ոչ միայն չի տեղեկացվել նախաքննության ավարտի մասին, այլև պատշաճ կերպով որոշումը չի ուղարկվել կողմին՝ խախտելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 77-րդ հոդվածը:

3.2. *Նախաքննության մարմինը նախաքննության շրջանակներում չի պարզել*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 17-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Քրեական հետապնդում իրականացնող մարմինը պարտավոր է ձեռնարկել քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված բոլոր միջոցառումները՝ գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման համար, պարզել ինչպես կասկածյալի և մեղադրյալի մեղավորությունը

հիմնավորող, այնպես էլ նրանց արդարացնող, ինչպես նաև նրանց պատասխանատվությունը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները»:

Նախաքննության ընթացքում վարույթն իրականացնող մարմնի կողմից չեն պարզաբանվել մի շարք հարցեր, որոնց բացահայտումը էական նշանակություն կարող էր ունենալ գործի ելքի համար:

3.2.1. Դատաբժշկական փորձաքննությամբ պարզվել է, որ Գ. Հովսեփյանն ունեցել է թեթև հարբածություն, Ա. Սարգսյանը՝ թեթև հարբածություն, Ա. Մանասյանը՝ թեթև ալկոհոլային խմածություն, Ռ. Հովհաննիսյանը՝ ծանր աստիճանի խմածություն, Վ. Թադևոսյանը՝ ծանր աստիճանի խմածություն և Կ. Այվազյանը՝ ծանր աստիճանի հարբածություն:

Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերի կարգապահական կանոնադրությունը հաստատելու մասին ՀՀ կառավարության որոշման՝ զինծառայողների կարգապահական կոպիտ զանցանքների ցանկը և նրանց կարգապահական մեկուսացումն ի կատար ածելու կարգի 1-ին մասի 5 ենթակետի համաձայն՝ զինծառայողների կարգապահական կոպիտ զանցանքներն են ... ալկոհոլի, թմրանյութերի կամ թունանյութերի օգտագործման հետևանքով անսթափ վիճակում ծառայողական պարտականությունների կատարումը:

Նախաքննության մարմինը պարտավոր էր կատարել պատշաճ քննություն պարզելու այն հանգամանքը, թե երբ և ինչ պայմաններում են զինծառայողները ծառայության ժամանակ ալկոհոլ օգտագործել, ինչպես են զինծառայողները ձեռք բերել ալկոհոլը: Ինչպես նաև քննություն չի տարվել պարզելու վրա հասած ծանր հետևանքների և զորամասի հրամանատարի թիկունքի գծով տեղակալ փոխգնդապետ Վիգեն Պետրոսյանի և շտաբի պետի տեղակալ փոխգնդապետ Սամվել Գևորգյանի ծառայողական պարտականությունները չկատարելու միջև եղած պատճառահետևանքային կապը պարզելու ուղղությամբ:

26.10.2012թ. ՀՀ զինվորական դատախազ Գ. Կոստանյանի տուժողի իրավահաջորդի բողոքը մերժելու մասին որոշմամբ հայտնում է, որ կարգապահական խախտում թույլ տալու համար Վ. Պետրոսյանը և Ս. Գևորգյանը ՀՀ ՊՆ թիվ 888 հրամանով ենթարկվել են կարգապահական տույժի, որը սակայն չի նշանակում, որ նախաքննության մարմնի կողմից իրականացվել է բազմակողմանի լրիվ և օբյեկտիվ քննություն:

3.2.2. Ըստ որոշման, Վ. Թադևոսյանի կողմից ֆիզիկական բռնություն է կիրառվել միայն Ա. Սարգսյանի նկատմամբ /ըստ դատաբժշկական փորձաքննության եզրակացության Ա. Սարգսյանի մարմնի վրա ոչ հրազենային վնասվածքներն են՝ քերծվածքներ՝ աջ արմնկահոդի շրջանի, աջ նախաբազկի ստորին երրորդի հետին մակերեսին/: Սակայն որոշման մեջ մատնանշվում է, որ

արտաքին ոչ հրազենային բնույթի վնասվածքներ արձանագրվել են նաև Ա. Մանասյանի դիակի վրա /քերծվածքներ՝ բերանի ձախ անկյան շրջանում, իրանին, վերին վերջույթներին, արյունազեղում՝ կրծքավանդակին/:

Թիվ 36 փորձագիտական եզրակացության համաձայն Ա. Մանասյանի մարմնի վրայի ոչ հրազենային վնասվածքները **կարող էին** առաջանալ արգոնալ շրջանում: Միաժամանակ նախաքննության մարմինը նշում է, որ Ա. Մանասյանի մարմնի վրա մարմնական վնասվածքների առկայության վերաբերյալ ոչ մի փաստական տվյալ ձեռք չի բերվել: /26.10.2012թ. տուժողի իրավահաջորդի բողոքը մերժելու մասին որոշման 2.2.3 կետ/: Նախաքննություն իրականացնող մարմինը ևս փաստում է, որ իր կողմից գործողություններ չի ձեռնարկվել պարզելու Ա. Մանասյանի մարմին վրա եղած վնասվածքների առաջացման պատճառները բացահայտելու, ինչպես նաև վնասվածքները հասցնելու հանգամանքի և վրա հասած ծանր հետևանքների միջև եղած պատճառահետևանքային կապը պարզելու ուղղությամբ:

3.2.3. Դատաձգաբանական փորձաքննությունների համաձայն՝ անտիմոն մետաղի քանակությունը գերազանցում է նորմայի շեմը Կ. Այվազյանի և Վ. Թադևոսյանի մարմնի վրա: Մասնավորապես, ըստ Վ. Թադևոսյանի աջ և ձախ ձեռքերի մատների արանքից վերցված նմուշի, դատաձգաբանական փորձաքննության եզրակացությունը վկայում է այն մասին, որ նա շփվել է զենքի հետ կամ դա կարող է լինել կրակոցի արդյունք: Այս հանգամանքն էական նշանակություն ունի պարզելու Վ. Թադևոսյանի կողմից զենք օգտագործած լինելու հանգամանքը, որը նույնպես քննության առարկա չի դարձել քննիչի կողմից: Այն էական նշանակություն ունի նաև այն հարցի պարզաբանման տեսակետից, թե ինչու է Կ. Այվազյանը սպանել նաև մյուս զինծառայողներին, եթե ըստ որոշման, Կ. Այվազյանը, տեսնելով, որ Ա. Սարգսյանի նկատմամբ ավագ լեյտենանտ Վ. Թադևոսյանը բռնություն է կիրառում, զենքը լիցքավորել է և կրակել Վ. Թադևոսյանի ուղղությամբ: Այսպիսով, քննիչի կողմից չի բացահայտվել բացի Վ. Թադևոսյանին մյուս զինծառայողներին սպանելու՝ Կ. Այվազյանի շարժառիթները:

ՀՀ զինվորական դատախազը տուժողի իրավահաջորդի բողոքը մերժելու մասին որոշման 2.2.5 կետում նշում է, որ Կ. Այվազյանին բնորոշ են եղել այնպիսի անհատական հոգեբանական առանձնահատկություններից, ինչպիսիք են համարձակությունը և վճռականությունը: Ըստ որոշման նախաքննության ընթացքում հարցաքննված Կ. Այվազյանի համածառայողները ցուցմունքներ են տվել այն մասին, որ Կ. Այվազյանը նշել է, որ զորացրվելուց հետո, երբ վերադառնաԱՄՆ հանցագործություններով պիտի զբաղվի, ինչպես նաև մարմնի վրա ուներ դաջվածք "5000" թվանշումով, որը ըստ նրա նշանակում էր, որ նա գտնվում է հինգ հազար հոգանոց կազմակերպության մեջ, որոնք զբաղվում են ավազակային հարձակումներով:

Այսինքն ելնելով վերը նշվածից կարող ենք ասել, որ վարույթն իրականացնող մարմինը միայն ենթադրությունների հիման վրա է և (ելնելով Կ. Այվազյանի մարմնի վրայի դաջվածքի ենթադրյալ նշանակությունից) գտել, որ Կ. Այվազյանը կարող էր կատարել նշված հանցագործությունը:

Վարույթն իրականացնող քննիչի կողմից ուսումնասիրության առարկա չի դարձել.

3.2.4. Ըստ որոշման թիվ 36534 զորամասի 4-րդ գումարտակի 11-րդ վաշտի 2-րդ դասակի 2-րդ ջոկի ամբողջ անձնակազմը, այդ թվում՝ նաև սպանված զինծառայողները, 2010 հուլիսի 20-ից գումարտակի հրամանատար Ֆելիքս Բաղդասարյանի հրամանով ներգրավված է եղել ինժեներական աշխատանքերի մեջ և դրանից հետո հուլիսի 24-ից անմիջապես ներգրավվել են մարտական հերթապահության մեջ

- որքանով է օրինաչափ ինժեներական աշխատանքներից անմիջապես հետո զինծառայողների ներգրավվումը մարտական հերթապահության մեջ,
- արդյոք դա չէր կարող պատճառ հանդիսանալ մարտական դիրքում հոգնածության պատճառով Կ. Այվազյանի և Սարգսյանի քնելուն:

Վերը նշված հարցի վերաբերյալ ՀՀ զինվորական դատախազը տուժողի իրավահաջորդի բողոքը մերժելու մասին որոշման 2.2.7 կետում նշում է, որ ՀՀ ՊՆ 23.12.2008թ. թիվ 0250 հրամանի համաձայն՝ մարտական հերթապահության նշանակված ստորաբաժանումը զորամասի հրամանատարի հայեցողությամբ կարող է ինժեներական աշխատանքների ներգրավել ոչ միայն մարտական հերթապահությունից առաջ այլև մարտական հերթապահության ժամանակ: Սակայն դատախազի կողմից հղում է կատարված ՀՀ ՊՆ 23.12.2008թ. թիվ 0250 հրամանը, որը ՀՀ Պաշտոնական տեղեկագրում հրապարակված չէ, հետևապես մենք հնարավորություն չենք ունեցել ծանոթանալու հրամանի բովանդակությանը: Այնուամենայնիվ հարկ եմ համարում նշել, որ սույն դեպքում պետք է նախաքննության մարմնի կողմից գնահատվեր, հետազոտվեր այն հանգամանքը, թե որքանով է զինծառայողների հոգնածությունը կապված եղել ողբերգական դեպքի հետ:

3.2.5. Նախաքննության ընթացքում Կ. Այվազյանի պապի կողմից ներկայացվել են փաստաթղթեր, համաձայն որոնց, որ Կ. Այվազյանը ԱՄՆ Կոլորադո նահանգի Արապահո վարչական տարածքի դատարանի կողմից դատապարտվել է ազատազրկման: Միաժամանակ, դատարանի որոշմամբ արգելվել է Կ. Այվազանին գտնվել այն տարածքում, որտեղ առկա է զենք: Զորամասի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալն իր ցուցմունքում նշել է, որ Կ. Այվազյանը ներգրավված է եղել այն անձանց ցուցակում, որոնք գտնվել են հատուկ ուշադրության կենտրոնում: Քրեական գործի նախաքննության ընթացքում Կ. Այվազյանին ԶՈՒ զորակոչելու օրինականության հարցը քննության չի առնվել և գնահատական չի ստացել այն

հանգամանքը, թե արդյոք Կ. Այվազյանի օրենքի խախտմամբ զորակոչը զենքի հետ նրա առնչություն ունենալու վերաբերյալ դատարանի դիրքորոշման անտեսելը չի հանգեցրել թիվ 147 մարտական դիրքում ողբերգական իրադարձություններին:

3.2.6. Եթե ըստ նախաքննության մարմնի վարկածի Դ. Հարությունյանը հերթապահության մեջ ներգրավված 6 դիտորդների հետ ծանոթացել է դեպքի օրը, ապա ինչն է պատճառը, որ իր ցուցմունքներից առաջինում նշել է, որ չի ճանաչել հերթապահություն իրականացնող զինծառայողներին, իսկ հաջորդ ցուցմունքում նշել է նրանց անուն ազգանունները, ինչպես նաև թե նրանցից յուրաքանչյուրը ինչ է արել:

3.2.7. Որոշման մեջ հիմնավորված չէ Կ. Այվազյանի կողմից զինծառայողների վրա ՌՊԿ 47 ձեռքի գնդացրից կրակելու ժամանակ դիրքի և սպանվածների դիակների տեղակայման համապատասխանությունը:

3.2.8. Վարույթն իրականացնող մարմնի կողմից քննության չի արժանացել սպանված զինծառայողների հրազենային վնասվածքների հետքերի համապատասխանեցումը Կ. Այվազյանի ենթադրյալ դիրքից, զենքի կիրառման դեպքում գնդակների ուղղություններին, որն էական նշանակություն ունի քրեական քորձի լուծման համար, մասնավորապես, Կ. Այվազյանի կողմից զինծառայողներին սպանելու հանգամանքը պարզելու տեսանկյունից:

3.2.10 Նախաքննության մարմինը չի փորձել քննությամբ պարզել արդյոք Կ. Այվազյանը, ելնելով իր անձնական տվյալներից (հասակը՝ 150-155 սմ), կարող էր ձեռքի գնդացրով կատարել ինքնասպանություն:

2.3. Համաձայն ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 124 հոդվածի ապացուցումը, գործի օրինական հիմնավորված և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքներ բացահայտելու նպատակով ապացույցներ հավաքելը, ստուգելը, գնահատելն է:

Սույն դեպքում նախաքննության մարմնի կողմից առանց բողոքի 3.2-րդ կետում նշված հարցադրումների պարզաբանման հնարավոր չէ քննությունը համարել բազմակողմանի, օբյեկտիվ և լրիվ: Ելնելով որոշման նյութերի վերլուծությունից, գտնում ենք որ.

- Կ. Այվազյանին անօրինական ՀՀ ԶՈՒ զորակոչելու համար պատասխանատու անձանց նկատմամբ պետք է մեղադրանք առաջադրել և համապատասխան պատասխանատվության ենթարկել
- առկա են բավարար հիմքեր՝ մեղադրանք առաջադրելու զորամասի հրամանատարի թիկունքի գծով տեղակալ փոխգնդապետ Վիգեն Պետրոսյանի և շտաբի պետի տեղակալ փոխգնդապետ Սամվել Գևորգյանի նկատմամբ (3.2.1 կետում նշված պատճառաբանությամբ):

- վարույթն իրականացնող մարմնի կողմից հիմնավորված չէ Կ. Այվազյանի կողմից 4-րդ գումարտակի 11-րդ վաշտի 2-րդ դասակի հրամանատար ավագ լեյտենանտ Վարդգես Արարատի Թադևոսյանին և նույն գումարտակի 11-րդ վաշտի 2-րդ դասակի, պարտադիր ժամկետային զինծառայողներ՝ սերժանտ Գարեգին Սամվելի Հովսեփյանին, շարքայիններ Անդրանիկ Սարգսի Սարգսյանին, Ռոբերտ Միքայելի Հովհաննիսյանին, և նույն զորամասի հետախուզական վաշտի 1-ին դասակի 1-ին ջոկի հետախույզ-նռնակաձիգ, շարքային՝ Արտեմ Սուրենի Մանասյանին սպանելու փաստը՝ շարժառիթների բացակայության հիմավորմամբ:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածը՝

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ

վերացնել ՀՀ ՊՆ ՀԿԳ քննչական բաժնի ՀԿԳ ավագ քննիչ Մ. Բուլղադարյանի կողմից 28.07.2012թ կայացված քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշումը և գործը ուղարկել նախաքննության:

Կից ներկայացնում եմ

1. 28.07.2012թ. քրեական հետապնդում չիրականացնելու և քրեական գործի վարույթը կարճելու մասին որոշման պատճենը
2. 26.10.2012թ. ՀՀ զինվորական դատախազ Գ. Կոստանյանի որոշման պատճենը:

Դիմումատուներ՝ Ս. Կարապետյան

Մ. Հովհաննիսյան

Ա. Սաքունց

14.11.2012թ.